ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՆԹՅՈՒՐՔԻԶՄԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՎՏԱՆԳԸ

Էմիլ Օրդուխանյան
քաղաքական գիտությունների թեկնածու
ԵՊԼՀ UNESCO-ի ժողովրդավարության, մարդու իրավունքների
և եվրոպագիտության ամբիոնի ավագ դասախոս

Բանալի բառեր՝ Եվրասիական Տնտեսական Միություն, պանթյուրքիզմ, աշխարհաքաղաքական գործընթացներ, «հայկական սեպ», արցախյան խնդիր, Հարավային Կովկաս:

Եվրասիական Տնտեսական Միության (ԵՏՄ) ստեղծումը լուրջ և կարևոր գործընթաց է աշխարհաքաղաքական արդի զարգացումները հավասարակշռելու, ինչպես նաև ազդեցության գոտիներն ընդլայնելու և բազմաբևեռ աշխարհն ավելի կանխատեսելի դարձնելու համար: Իհարկե, պետք է այս դեպքում հաշվի առնել այսպիսի կառույցի ձևավորման և գործառնության պատմական փորձը՝ ի դեմս Եվրոպական Տնտեսական Միության, որը հետագայում վերանվանվեց Եվրոպական Միություն: Սակայն եվրասիական հատվածում ձևավորվող այս նոր տնտեսական միությունը արդյունավետ գործելու և իր առջև դրված խնդիրները լուծելու համար պետք է, միանշանակ, հաշվի առնի նախորդ կառույցի անցած ճանապարհը՝ վերելքներով և դժվարություններով հանդերձ: Միայն այսպիսի մոտեցումը հնարավորություն կտա խուսափել հավանական բարդություններից, որոնցից զերծ չեն կարողանում մնալ միջազգային կազմակերպությունները, թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ ռազմավարական նշանակության:

Անդրադարձն այս տնտեսական կառույցին մեզ համար ևս բավականին կարևոր հարց է, քանի որ Հայաստանի Հանրապետությունը ևս նախապատրաստվում է դրա մասը կազմել: Ուստի նոր ձևավորվող կառույցում մեր երկրի տեղը և դերը հասկանալու համար անհրաժեշտ է խորապես ուսումնասիրել և վերլուծել տվյալ միության ձևավորման գործընթացը, ինչպես նաև դիտարկել դրա արդյունավետության հնարավորությունները և հեռանկարները մեր ազգային շահի ներկայացման և պաշտպանության տեսանկյունից: Այդ իսկ պատճառով հոդվածում փորձ է արված դիտել ձևավորվող ԵՏՄ-ն ոչ թե մակերեսային և գործնական-կիրառական կողմը, այլ դրա ձևավորման տեսական և խորքային դրդապատճառները և դրանց ազդեցությունը տվյալ կառույցի գործառնության և հայկական պետության պահպանման վրա:

Հարկ է նշել, որ ԵՏՄ հիմնադրման անդրանիկ գագաթնաժողովը, որին Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի հետ միասին մասնակցում էր նաև ՀՀ-ն (29.05.2014, Աստանա) հատկանշական էր ընդհանրապես բոլոր կողմերի և

մասնավորապես՝ ՀՀ-ի համար, քանի որ Ղազախստանի նախագահ Նազարբաևի կողմից բարձրաձայնված արդրբեջանական նախագահի նամակը՝ ուղղված մասնակից երկրներին, չի կարող անտարբեր թողնել հայկական կողմին: Խոսքը վերաբերում է Արցախին, որը, համաձայն սույն նամակում նշված տեսակետի, չպետք է ՀՀ-ի հետ միասին մուտք գործի տվյալ տնտեսական գոտի:

Ըստ էության, հայկական կողմի համար առավել կարևոր է ոչ թե տվյալ նամակի բովանդակությունը, որը, իհարկե կանխատեսելի էր, այլ այն հանգամանքը, որ այդ նամակը բարձրաձայնվեց հենց այդ պահին և հենց նախագահ Նազարբաևի շուրթերից, ով, կարծում եմ, որ պատահական չնշեց, որ նամակը ստացել է. «Մեր ընկեր՝ ադրբեջանական նախագահ Ալիևի կողմից[1]»: Ուստի այս պարագայում միանգամից հարց է առաջանում, թե «մեր ընկեր» ասելիս, ու՞մ նկատի ուներ Նազարբաևը:

Սակայն այդ նամակի ընթերցումը և դրա ազդեցությունը ձևավորվող միության և դրա արդյունավետ գործառնության վրա չի կարելի անտեսել առաջին հերթին այն պարզ պատճառով, որ այդ նամակի հասցեատերը հենց ՀՀ-ն էր: Հետևապես՝ ստացվում է այնպես, որ ԵՏՄ-ին նույնիսկ անդամակցելու ցանկություն չհայտնած մի պետություն կարողանում է իր տեսակետը և ձայնը լսելի դարձնել հենց տվյալ միության հիմնադրման ժողովում, որը, ըստ էության, մնաց տվյալ պահին անարձագանք: Սակայն հետագայում այդ հարցի վերաբերյալ հնչած հայկական անդրադարձը պետական տարբեր մակարդակներում, փաստորեն, արտահայտեց հենց արդբեջանական կողմի անուղղակի կամքը: Արդյունքում՝ կարելի է կանխատեսել, որ հայկական կողմի ձայնը, ունենալով արդեն իսկ նախադրյալ, կարող է պակաս լսելի լինել տվյալ միության շրջանակներում՝ ի համեմատ միության մյուս մասնակիցների և նույնիսկ ոչ մասնակիցների:

Այնուամենայնիվ, բացի վերը նշվածից, ձևավորվող ԵՏՄ դեպքում կարելի է առանձնացնել ավելի խորքային հավանական խնդիրներ, որոնց լուծման հարցում ՀՀ-ն կարող է ունենալ առանցքային դեր՝ պայմանավորված նախևառաջ ոչ թե տնտեսական գործոնով, այլ քաղաքական և անվտանգության՝ չնայած, որ միության տրամաբանությունը, ըստ էության, տնտեսական հիմքերի վրա է:

Այսօր ԵՏՄ անդամ պետությունները հինգն են՝ Ռուսաստանը, Բելառուսը, Ղազախստանը որպես հիմնադիրներ, և Ղրղզստանը, Հայաստանի Հանրապետությունը: Սակայն միությունը, իհարկե, ունի նաև ընդլայնման հեռանկարներ: Եթե համեմատենք մասնակից երկրներում տիրող քաղաքական իրավիճակները, ապա ակնհայտ է, որ միայն ՀՀ-ն է, որն ունի չլուծված տարածքային խնդիր՝ արցախյան հիմնահարց, որի ինքնիշխանությունը ճանաչված չէ որևէ

[1] **Астана - Заседание ВЕЭС в расширенном составе**. 29 05 2014, http://www.youtube.com/watch?v=USWHT_FCCEE, /05.06.2014/.

պետության կողմից: Իհարկե, կարելի է նաև նշել Ղրիմի հարցը ՌԴ տեսանկյունից, սակայն այս երկու հարցերը համեմատելի չեն, քանի որ ՌԴ-ն ճանաչել է Ղրիմի ինքնիշխանությունը և բավարարել վերջինիս՝ իր կազմում միավորվելու խնդրանքը: Եվ, իհարկե, միայն արցախյան խնդիրն էր, որ բարձրաձայնվեց հենց ԵՏՄ հիմնադիր ժողովի ընթացքում: Դա նշանակում է, որ արցախյան խնդիրն ունի բավականին լուրջ կարևորություն տվյալ միության կայացման գործում, հետևապես՝ նաև պայմանավորում է ՀՀ-ի կարգավիճակը տվյալ միության շրջանակներում: Եվ պատահական չէ, որ այդ խնդրի մասին խոսեց Նազարբաևը, ով հայտնի է իր թուրքամետ դիրքորոշմամբ, որը հաճախ է արտահայտում տարբեր առիթներով՝ չնայած այն բանին, որ ՀՀ-ի հետ միասին Ղազախստանը գտնվում է ՀԱՊԿ քաղաքական դաշինքում, որի առաքելությունն է ռազմական օժանդակություն ցուցաբերել դաշինքի մասնակից երկրներին դրա անհրաժեշտության դեպքում:[2] Սակայն Նազարբաևի և Ղազախստանի համար, ըստ էության, ավելի կարևոր է թուրքական բարեկամության պահպանումը և խորացումը, իսկ հայկական կողմի դեպքում գոնե չեզոքության պահպանումը մղվում է հետին պլան: Այս դեպքում պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք, ըստ որի՝ Ղազախստանը՝ որպես թյուրքական գործոնին մեծ կարևորություն տվող պետություն, միշտ պաշտպանել է թուրքական դիրքորոշումը առավել ևս արցախյան խնդրի տեսանկյունից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ի անդամակցությունը Եվրասիական Տնտեսական Միությանը, իհարկե, իր հիմքում ունենալով ռուսական ազդեցությունը, ըստ էության ոչ այնքան տնտեսական է, որքան անվտանգության, քանի որ Եվրամիության և Մաքսային Միության (հետագայում՝ ԵվրԱզԷՍ-ի) միջև ընտրությունը և հայկական արտաքին քաղաքականության ուղու փոփոխությունը պայմանավորված էին հենց անվտանգության խնդրով: Սակայն վերջին շրջանում ակնհայտ է դառնում, որ այս անդամակցությունը չէր կարող ենթադրել արցախյան խնդրում առաջքայլ, քանի որ այդ խնդրով զբաղվում է մեկ այլ միջազգային կառույց՝ ԵԱՀԿ Մինսկի խումբը: Բայց մենք տեսնում ենք, որ այդ խնդիրը հնչում է նաև ԵՏՄ ձևաչափում, ինչը ևս մեկ անգամ փաստում է, որ արցախյան խնդիրը կարող է առանցքային լինել միության կայացման գործում: Սակայն նոր ձևավորվող միությունում արդեն իսկ նկատվում է թյուրքական գործոնի անուղղակի ներկայությունը և ակնհայտ ազդեցությունը, որի «դեսպանը» Ղազախստանն է:

Այս իրողության վերլուծությունը թույլ է տալիս խորամուխ լինել մեկ այլ կարևոր խնդրի մեջ, որը մշտապես, թեկուզ և ոչ բացահայտ, գոյություն է ունեցել որպես պանթյուրքիզմ: Ստացվում է այնպես, որ Ղազախստանը, միգուցե ոչ պատահաբար տուրք տալով պանթյուրքիզմի գաղափարախոսությանը, առաջ է տանում թուրք-

[2] **Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպություն, հոդված 4,** http://www.mfa.am/hy/international-organisations/CSTO/, /05.06.2014/

ադրբեջանական դիրքորոշումը՝ ստեղծելով դրա համար գոյության և ազդեցության իրական և գործուն նախադրյալներ հենց ձևավորվող ԵՏՄ շրջանակներում, ինչի վառ ապացույցը ադրբեջանական նամակի ընթերցումն էր: Ի դեպ՝ Ղազախստանի առաջնորդ Նազարբաևը հետևողականորեն պրոպագանդում է եվրասիական միության գաղափարը դեռևս 1990-ականներից:[3]

Պանթյուրքիզմի գաղափարախոսությունը ունի խոր արմատներ, որոնք սկիզբ են առնում դեռևս 19-րդ դարի կեսերից թուրքական ժողովուրդներով բնակեցված պետություններում, որի նպատակը թուրքալեզու, մշակութային և էթնիկ ընդհանրությամբ զանգվածների քաղաքական կոնսոլիդացիան է: [4] Ըստ էության, պանթյուրքիզմի շարժումը սկիզբ է առել ռուսական վերահսկողության տակ գտնվող տարածքներում՝ Ղրիմում և Վոլգայում, որոնք ի սկզբանե ձգտում էին միավորվել Օսմանական կայսրության հետ՝ դիմակայելու համար ռուսական աճող տիրապետությանը և ցարիզմին:[5] Պանթյուրքիզմի գաղափարախոսությունը սերտորեն կապված է «թուրան» հասկացության հետ, որը ներառում է թուրքական ժողովուրդների ծագման նախահայրենիքը՝ ընդգրկելով ուրալ-ալթայական լեզվաընտանիքին պատկանող էթնոսները: Հետևապես՝ «թուրանը» համարվում է թյուրքական աշխարհի առանցք:

Ուշագրավ են պանթյուրքիզմի ծրագրի հիմնական սկզբունքները, որոնք, ըստ Զարևանդի՝ հիմնվում են էթնոլոգիական, սոցիոլոգիական, պատմական և քաղաքական փաստարկների վրա: Էթնոլոգիական տեսանկյունից թուրքերը, թաթարները, թուրքմենները, ուզբեկները, ղազախները, մոնղոլները, յակուտները և այլք համարվում են արյունակցական կապով և միևնույն ծագման ժողովուրդներ՝ եղբայրներ: Սոցիոլոգիական տեսանկյունից այս ժողովուրդների մեծամասնությանը հատուկ են բնավորության նույն գծերը, ավանդույթները և բարքերը: Պատմական տեսանկյունից բոլոր թուրանական ժողովուրդները միևնույն ցեղի տարբեր խմբերն են: Հոգեբանական տեսանկյունից այս բոլոր ժողովուրդները գիտակցում են իրենց թուրք լինելը և միևնույն ազգին պատկանելը: Իսկ ամենակարևորը՝ քաղաքական տեսանկյունից այս ժողովուրդները պետք է ամրապնդեն ազգային ինքնագիտակցությունը և միմյանց հետ համերաշխությունը: Թուրքիան պետք է աջակցի եղբայրական ժողովուրդների ձգտմանը միավորվելու միասնական հզոր և դաշնային կայսրության մեջ:[6]

---

[3] **Տե՛ս Проект документа Н. Назарбаева "О формировании Евразийского союза государств"**, в книге: Назарбаев Н. Евразийский союз: идеи, практика, перспективы, 1994-1997, М., 1997, с. 38-50

[4] **Pan-Turkism** - Britannica Online Encyclopedia, http://www.britannica.com/EBchecked/topic/440700/Pan-Turkism, /03.06.2014/

[5] **Pan-Turkism** - Britannica Online Encyclopedia, http://www.britannica.com/EBchecked/topic/440700/Pan-Turkism, /03.06.2014/

[6] **Зареванд.** Турція и Пантуранизм, Введеніе А.Н. Мандельштама, Париж, 1930, с. 81-83.

Պանթյուրքիզմի գաղափարախոսության տարածման համար գոյություն են ունեցել և այսօր էլ շարունակում են գոյություն ունենալ տարբեր մեխանիզմներ և՛ մամուլի, և՛ քաղաքական միավորների, և՛ տվյալ գաղափարախոսության տարածման համար անհրաժեշտ այլ միջոցների տեսքով: Որպես օրինակ կարելի է նշել՝ 1883-1918 թթ. Ղրիմում լույս տեսած «Переводчикъ-Терджиманъ» թերթը, որը փակվել է բոլշևիկների կողմից, 1911 թ. Ստանբուլում լույս տեսնող «Թուրքական հայրենիք» թերթը, 1923 թ. Զիյա Գյոքալփի՝ «Թյուրքականության հիմնական սկզբունքներ» գիրքը, որը հսկայական ազդեցություն է ունեցել պանթյուրքիզմի գաղափարախոսության տարածման վրա:

Ի դեպ՝ թյուրքականության գաղափարը լայն արձագանք է ստացել ղրիմյան, ուրալյան, ադրբեջանական և միջինասիական «մտավորականության» և հոգևորականության շրջանում: Սակայն հարկ է նշել, որ 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո թուրքական ժողովուրդների միավորման փորձերը խստորեն ճնշվեցին կոմունիստների կողմից: Ավելին՝ արվեց ամեն ինչ, որպեսզի մասնատվեն և թուլանան թուրքական ժողովուրդները: [7] Այնուամենայնիվ՝ 1938 թ. Աթաթուրքի մահվանից հետո պանթյուրքիզմի որոշ գաղափարներ վերածնվեցին ԽՍՀՄ-ի դեմ պայքարի նպատակով, որպեսզի նրանից անջատեն Ադրբեջանը և Միջին Ասիայի մյուս պետությունները: [8] Իսկ 1991 թ. ԽՍՀՄ լուծարումը ստեղծեց պանթյուրքիզմի գաղափարախոսության վերականգնման համար բոլոր նախադրյալները, քանի որ Թուրքիան այլևս միակ թուրքական անկախ պետությունը չէր: Նրան գումարվեցին Ադրբեջանը, Ուզբեկստանը, Թուրքմենստանը, Ղրղզստանը և Ղազախստանը, որոնք միավորվեցին «Թուրքական ժողովուրդների ժողով» կառույցում, ինչը ստեղծեց պանթյուրքիզմի իրականացման բոլոր նախադրյալները նոր աշխարհակարգի պայմաններում: Արդի շրջանում պանթյուրքիզմի գաղափարներն առավել արդիական են Թուրքիայում և Ադրբեջանում:[9]

Այս դեպքում պետք է հիշել նաև որոշ պատմական փաստեր՝ ի դեմս 19-րդ դարում ռուս-թուրքական պատերազմների, 1914-1918 թթ. Առաջին աշխարհամարտի, 1939-1945 թթ. Երկրորդ աշխարհամարտում Ռուսաստանի վրա հարմար առիթի դեպքում Թուրքիայի հնարավոր հարձակման մասին և այլն:

Հարկ է նշել, որ պանթյուրքիզմի գաղափարախոսությունն այսօր ունի նաև իր խորհրդանիշը դրոշի տեսքով, որն արտացոլում է 2012 թ. օգոստոսի 22-ին «Թուրքական խորհրդի» մեջ միավորված անդամ պետությունների՝ Թուրքիայի, Ադրբեջանի, Ղազախստանի և Ղրղզստանի պետական դրոշների տարրերը: Ի դեպ՝ Թուրքիայի արտգործնախարար Դավութօղլուն Բիշքեկում հայտարարել է, որ թուրքական այդ

[7] **Badretdin S.** Pan-Turkism: Past, Present and Future (This article appeared in the December 1998 issue of "Turkoman" magazine published in London, No 3-4, 18.04.2000).

[8] **Пантюркизм: вековая угроза России**, газета "Правда", 11.12.2007, http://www.pravda.ru/world/asia/centralasia/11-12-2007/248234-turkey-0/

[9] **John C. K. Daly** THE REBIRTH OF PAN-TURKISM? Eurasia Daily Monitor Volume: 5 Issue: 5, January 11, 2008.

պետությունները միասին կարող են հասնել մեծ հաջողությունների, իսկ Եվրամիության դրոշի նման իրենց դրոշը պետական դրոշներից հետո համարվում է երկրորդ պարտադիր:[10]

Այսպիսով՝ վերը նշվածը հիմնավոր հիմքեր է տալիս ենթադրելու, որ «պանթյուրքական գործոնը» ձևավորվող Եվրասիական Տնտեսական Միությունում կարող է ներկայանալ ի դեմս Ղազախստանի և Ղրղզստանի: Իսկ արցախյան խնդրի վերաբերյալ ղազախական կողմի հնչեցրած ադրբեջանական նամակը փաստում է պանթյուրքիզմի գաղափարախոսության գործադրման և տվյալ միության շրջանակներում դրա ունեցած ազդեցության մասին: Դա նշանակում է, որ Հայաստանը, ինչպես նաև Ռուսաստանը, որոնց դեմ է մշտապես ուղղված եղել պանթյուրքիզմի գաղափարախոսությունը պետք է ավելի հեռատես, ծանրակշիռ և զգոն մոտեցում ցուցաբերեն այս հարցում վերահսկողության լծակները հետզհետե չկորցնելու և նորանոր խնդիրների առջև կանգ չառնելու համար: Ուստի տվյալ միության շրջանակներում և ոչ միայն, հայկական կողմի նկատմամբ ավելի լոյալ և գործընկերային վերաբերմունքը նաև կապահովագրի աշխարհաքաղաքական զարգացումների արդյունավետ զարգացումը հենց ռուսական կողմի համար, քանի որ հակառակ դեպքում կարող են ծագել բավականին բարդ խնդիրներ հենց Ռուսաստանի համար, որը, հաշվի առնելով այսօր Արևմուտքի նպատակաուղղված ճնշման քաղաքականությունը, կարող է ստիպված լինել իր դիրքերի ամրապնդման համար անդրադառնալ արդեն ավելի լուրջ ներուժով հարավից ձևավորվող պանթյուրքական սպառնալիքին: Այս տեսակետի հիմնավորման համար հարկ է անդրադառնալ նաև ռուս հետազոտող Ցիմբուրսկուն, ում կարծիքով Ղազախստանի գերակայությունը եվրասիական տարածաշրջանում թույլ է տալիս միաժամանակ ճնշում գործադրել Ռուսաստանի վրա՝ նրա սիբիրյան տրանսպորտային կենտրոնակետում, Հնդկաստանի վրա՝ Քաշմիրի կողմից, Իրանի վրա՝ նրա թուրքական հյուսիսային գավառների կողմից, Չինաստանի վրա՝ Սինցզյան-Ույգուրական օկրուգի կողմից և, վերջապես, Տիբեթի և նույնիսկ Մոնղոլիայի վրա:[11] Հետևապես՝ Ղազախստանի դերը նոր ձևավորվող Եվրասիական Տնտեսական Միությունում չի կարելի անտեսել, քանի որ նրա ազդեցության լծակները ևս բավականին մեծ են և կարող են ստեղծել իրական նախադրյալներ պանթյուրքիզմի գաղափարախոսության ակտիվացման համար:

Եվրասիական միության հարցում ուշագրավ է նաև Կիրենի դիրքորոշումը, ով նշում է, որ եվրասիականության թուրքական հայեցակարգի սկզբունքները հիմնվում են թյուրքիզմի գաղափարախոսության վրա և ոչ մի նորույթ չեն բովանդակում, ինչը

---

[10] **Пантюркистский проект** (Туран), Геополитика, 11.11.2012, http://www.geopolitics.ru/2012/09/pantyurkistskij-proekt-turan/ /05.06.2014/.

[11] **Цымбурский В.** Казахстан - ключевое звено в конструкции современного мира, В сб. Путь к лидерству: социально-экономические и политические реформы в Казахстане, Астана, 2007, с. 46-51.

կպատասխաներ արդի համաշխարհային ինտեգրման գործընթացների մարտահրավերներին և կհամապատասխաներ Թուրքիայի՝ Եվրոպական Միությանը անդամակցելուն: Փաստորեն, խոսքը ոչ թե եվրասիական, այլ թյուրքական համագործակցության մասին է:[12]

Ինչ խոսք՝ ՀՀ-ի նշանակությունը ևս Եվրասիական Տնտեսական Միության շրջանակներում պակաս կարևոր չէ իր ռազմավարական տեսանկյունից, ինչը նաև հիմնավորում է ռուսական կողմի գործուն հետաքրքրությունը ՀՀ-ի նկատմամբ՝ պայմանավորված վերջին շրջանի բուռն զարգացումներով: Սակայն ՀՀ-ի դերի և նշանակության կարևորությունը պետք է հասկանա առաջին հերթին հայկական կողմը և փորձի այն վերածել մանևրելու լծակի, քանի որ Հայաստանը և Արցախը միանշանակ կարևոր են ռուսական կողմի համար ոչ միայն տնտեսական, այլև ակնհայտորեն ռազմավարական տեսանկյունից: Այս տեսանկյունից ՀՀ-ն կարելի է դիտարկել որպես Եվրասիական Տնտեսական Միության հարավ-կովկասյան կարևոր գործընկեր, քանի որ առանց ՀՀ-ի այսօր, թերևս, Ռուսաստանի համար առավել դժվար կլիներ պահպանել իր ներկայությունը և ազդեցությունը տվյալ տարածաշրջանում:

Իսկ ինչ վերաբերում է արցախյան հիմնահարցին և սույն միության ձևավորման շրջանակներում այդ խնդրի անդրադարձին, ապա այս դեպքում ռուսական կողմը պետք է կարևորի այն, քանի որ ՀՀ-ն և Արցախն այսօր այն միակ օղակն են, որը, մխրճված լինելով Թուրքիայի և Արդբեջանի միջև որպես «հայկական սեպ», լրջորեն խոչընդոտում է պանթյուրքիզմի գաղափարախոսության վերագործարկմանը: Սակայն, եթե Ռուսաստանը կորցնի զգոնությունը, իսկ արցախյան հարցը ինչ-ինչ պատճառներով լուծվի հօգուտ թուրքական դաշինքի, ապա «պանթյուրքական պետություններն» արդեն միմյանց հետ անխուսափելիորեն կունենան ցամաքային փոխկապակցված սահմաններ, ինչն էլ ավելի կհեշտացնի պանթյուրքիզմի գաղափարախոսության ակտիվացումը: Իսկ այդ հնարավոր տանդեմը, միանշանակ, չի կարող բխել և չհակասել ռուսական շահերին: Ստացվում է, որ նաև արցախյան խնդրով կարող է պայմանավորվել Եվրասիական Տնտեսական Միության շրջանակներում Ռուսաստանի գերակա դերակատարումը: Իսկ եթե Արցախը դուրս է մղվում եվրասիական տնտեսական գոտուց և դառնում է մեկուսի, առանց հայկական կողմի օժանդակության, ապա թուրքական հետաքրքրության շրջանակներում արցախյան խնդրի լուծումը դառնում է ավելի հավանական: Այսինքն՝ տնտեսապես մեկուսացնելով Արցախը և թույլ չտալով ՀՀ-ի հետ միասնական տնտեսական տարածքի ձևավորումը, հետագայում նաև նախատեսվող հավանական այլ գործընթացներ՝ ադրբեջանական կողմը պանթյուրքական մյուս պետությունների աջակցությամբ ստանում է բոլոր իրական հնարավորությունները լուծելու արցախյան խնդիրը, թե՛ ռազմական, թե՛ քաղաքական տեսանկյունից:

[12] **Киреев Н.** Турция: поиски национальной стратегии евразийского сотрудничестрва, Центральная Азия и Кавказ, N 1(19), 2002, с. 21.

Պանթյուրքիզմը և ղազախական դիրքորոշումը հեռանկարում կարող են ունենալ Թուրքիա-Ադրբեջան-Թուրքմենստան-Ղազախստան-Ղրղզստան դաշինքը, ապագայում նաև այդ դաշինքում ընդգրկելով՝ Հյուսիսային Կովկասի պետությունները, այդ թվում նաև Վրաստանը իր իսկ ոչ ռուսամետ դիրքորոշմամբ, որոնց ամբողջությունը կարող է լրջորեն թուլացնել ռուսական ազդեցությունը և դիրքերը՝ կասկածի տակ դնելով ռուսական քաղաքականության հաջողությունը: Ի դեպ՝ այս պարագայում հարկ է վկայակոչել Կիրեևին, ով իրավացիորեն նշում է, որ արմատական իսլամիզմը և թյուրքիզմը կարողանում են գաղափարախոսական համագործակցության հիմքեր գտնել թյուրք-իսլամական գաղափարախոսությունների սինթեզի միջոցով: Այդպիսի մոդելն առավել արդյունավետ է, երբ խոսքը վերաբերում է ազգայնական շարժումների խրախուսմանը Կովկասում, Կենտրոնական Ասիայում, ինչպես նաև Ռուսաստանի հանրապետություններում: Խոսքը մասնավորապես Հյուսիսային Կովկասի և, հատկապես, Չեչնիայի մասին է:[13] Այսինքն՝ չնայած այն հանգամանքին, որ այսօր Չեչնիան վարում է խիստ ռուսամետ քաղաքականություն, չի բացառվում, որ հարմար պահին, այն նորից կարող է վերադառնալ արդեն իսկ 1990-ականներին իրականացվող հակառուսական քաղաքականությանը:

Այս պարագայում հարկ է նաև վկայակոչել 2014 թ. մարտի 27-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում Ուկրաինայի տարածքային ամբողջականության վերաբերյալ բանաձևի քվերակության արդյունքները, որոնք հիմքեր են տալիս տեսնելու Ռուսաստանի դեմ ուղղված պանթյուրքական գաղափարախոսության կրող պետությունների միասնական դիրքորոշումը: Այսինքն՝ հարկ է նկատել, որ այդ բանաձևին Ռուսաստանի հետ միասին դեմ քվերակեցին Եվրասիական Տնտեսական Միության անդամ երկրներից միայն Բելառուսը և Հայաստանը, իսկ Ղազախստանը և Ղրղզստանը՝ որպես տվյալ միության անդամներ, էլ ինչ խոսք՝ պանթյուրքական մյուս պետությունները, իհարկե, չաջակցեցին ռուսական կողմին՝ քվեարկելով տվյալ բանաձևին կողմ կամ ձեռնպահ:[14] (Ի դեպ՝ քվերակության արդյունքներն են՝ 100 կողմ, 11 դեմ, 58 ձեռնպահ) Հետևապես՝ քվեարկության արդյունքների տրամաբանությունը ցույց է տալիս, թե որ պետություններն են Ռուսաստանի իրական դաշնակիցները, իսկ որոնք են նրա հետ ուղղակի համագործակցում:

Այս խնդրին հարկ է անդրադառնալ նաև ավելի խորը, այսինքն՝ քաղաքակրթական տեսանկյունից, քանի որ աշխարհաքաղաքական արդի զարգացումներում քաղաքակրթական գործոնը դառնում է բավականին կարևոր և նույնիսկ առաջնային: Այս խնդրի տեսական հիմքերն ուսումնասիրել և վերլուծել է

[13] **Киреев Н.** Турция: поиски национальной стратегии евразийского сотрудничестрва, Центральная Азия и Кавказ, N 1(19), 2002, с. 30.
[14] **UN Gen Assembly adopts resolution backing Ukraine's territorial integrity**, http://rt.com/news/ukraine-russia-crimea-resolution-609/, /27.03.2014/

ամերիկացի քաղաքագետ Հանթինգթոնը իր «քաղաքակրթությունների բախման» հայեցակարգում, [15] որտեղ նա, առանձնացնելով ութ քաղաքակրթական տիպեր, Ռուսաստանին, Բելառուսին, Հայաստանին և Վրաստանին դիտում է միևնույն սլավոնաուղղափառ քաղաքակրթության մեջ և առանձնացնում է մուսուլմանականը որպես առանձին քաղաքակրթություն: Հեղինակի այս դասակարգման արդյունքում Հայաստանը հայտնվում է ուղղափառ-սլավոնական աշխարհի կազմում: Իսկ Ռուսաստանին վերագրելով «ուղղափառ քաղաքականություն՝ (հետևաբար նաև Հայաստանի համար) նախատեսում է «համագործակցության կրավորական ձև»: [16] Սակայն ինչպես նշում է Լ. Շիրինյանը. «... պատմական իրողությունները, անգամ նրանց հակիրճ վերլուծությունը ապացուցում են, որ ստույգ չէ, առնվազն հակապատմական է հայ ժողովրդին, հայ մշակույթը, դասական Հայաստանի քաղաքակրթությունը, հետևապես, և Հայաստանը տեղավորելը «ուղղափառ-սլավոնական քաղաքակրթության» սանդղակում: Դա հակասում է ոչ միայն պատմական փաստերին, այլև Հայաստանի մշակույթ-քաղաքակրթության ինքնությանը»:[17] Իհարկե, այս հանգամանքը չի բացառում հայկական և ուղղափառ-սլավոնական քաղաքակրթությունների միջև նմանությունների գոյությունը, որը պետք է հաշվի առնի Ռուսաստանը, քանի որ ի տարբերություն թյուրքական (մուսուլմանական) մշակութային արժեհամակարգի, որի կրողներն են ԵՏՄ շրջանակներում Ղազախստանը և Ղրղզստանը, ՀՀ-ի հետ Ռուսաստանի քաղաքակրթական նմանություններն ակնհայտ են:

Ուստի եթե դիտում ենք վերը նշված բանաձևի վերաբերյալ քվեարկության արդյունքները նաև հանթինգթոնյան քաղաքակրթական տիպերի դասակարգման տեսանկյունից, ապա հիմնավորվում են ռուսական կողմին ի նպաստ արտահայտված հայկական և բելառուսական դիրքորոշումները, ինչպես նաև Ղազախստանի և Ղրղզստանի՝ Ռուսաստանին չաջակցող դիրքորոշումները՝ որպես մուսուլմանական քաղաքակրթության կրողներ՝ չնայած նաև այն հանգամանքին, որ Ռուսաստանի, Բելառուսի, Հայաստանի հետ միասին Ղազախստանը և Ղրղզստանը նույնպես հանդիսանում են ՀԱՊԿ ռազմական դաշինքի անդամ պետություններ, ինչպես նաև՝ Տաջիկստանը:[18]

Այս ամենը նշանակում է, որ ՄԱԿ-ի վերը նշված բանաձևի վերաբերյալ քվեարկության ժամանակ եվրասիական տնտեսական գոտու մաս կազմող Ղազախստանը և Ղրղզստանը նույնիսկ չկարողացան թաքցնել իրենց ոչ ռուսամետ դիրքորոշումը՝ լինելով պանթյուրքական (մուսուլմանական) մյուս պետությունների հետ

---

[15] **Huntington S.** The Clash of Civilizations and the Remaking of World Order, Simon & Schuster, 1997, 367 p.

[16] **Շիրինյան Լ.** Հայաստանի քաղաքակրթական ինքնությունը Հանթինգթոնի հիպոթեզի ոսպնյակում, /Քաղաքագիության հարցեր 2009/, Երևան, 2010, էջ 8:

[17] **Շիրինյան Լ.** նույն տեղում, էջ 27:

[18] Տե՛ս **ՀԱՊԿ պաշտոնական կայքէջ**, http://www.odkb-csto.org/ /05.06.2014/

միևնույն հարթությունում: Դա նշանակում է, որ քաղաքակրթական բախման տեսանկյունից նույնպես, որի արդի վառ օրինակը Ուկրաինայում ուղղափառ և կաթոլիկ քաղաքակրթական արժեքների բախումն է, ապագայում կարող է ձևավորվել պանթյուրքական դաշինք կամ միություն, որը կսկսի կլանել ռուսական ազդեցության գոտիներն այս դեպքում հարավից: Իսկ եթե նկատի ունենանք նաև այսօր արևմուտքից ԱՄՆ աջակցությամբ և եվրոպական պետությունների մասնակցությամբ տնտեսական և քաղաքական ճնշումները՝ ուղղված Ռուսաստանին, ինչպես նաև արևելքից հզորացող չինական գործոնը, որը կարող է լինել պոտենցյալ վտանգ (այսօր դժվար թե գտնվի մի պետություն կամ պետությունների միություն, որը չցանկանա համագործակցել Չինաստանի հետ), ապա Ռուսաստանի խնդիրներն այս դեպքում, իհարկե, կեռապտկվեն, իսկ միակ ճանապարհը, թերևս տանում է դեպի հյուսիս, որն ըստ էության փակուղի է: Հետևապես՝ կարելի է ենթադրել, որ հնարավոր բազմապիսի տնտեսական ճնշամիջոցները կարող են կլանել Ռուսաստանը և այն հասցնել փլուզման, եթե ռուսական կողմը չկատարի ճիշտ քաղաքական հաշվարկներ:

Թուրքական վեկտորը դեպի արևելք ուղղելու մասին է խոսում քաղաքագետ Լ. Շիրինյանը, ով իրավացիորեն նշում է, որ անգլո-սաքսերի՝ Մերձավոր և Միջին Արևելքում հաստատապես և տևականորեն տեղավորվելու դեպքում Թուրքիան ստիպված կլինի դառնալ ավելի ազգայնական: Եվրոպայից վտարված, արաբական Արևելքից հեռու վռնդվող Թուրքիան «վիրավորված», սակայն իր վերագտնվող հզորությունից արբեցած, կփորձի տարածվել դեպի Արևելք, դեպի նվիրական Թուրան:[19] Ստեղծված իրավիճակում, իհարկե, ՀՀ-ի և Ադրբեջանի միջև հարաբերությունների կարգավորումը քիչ հավանական է, քանի որ վերջինիս հասարակական և քաղաքական կյանքը բխում է ավարառության ցեղային բնազդներից: Հետխորհրդային այս արհեստածին «գաճաճ կայսրությունը» իներցիայով շարունակում է մնալ էքսպանսիոնիզմի պլատֆորմի վրա, քանզի ինքը ծնունդն է նույն համաթուրանական էքսպանսիոնիզմի:[20]

Ուստի և՛ ՀԱՊԿ, և՛ ԵՏՄ շրջանակներում Ռուսաստանի համար ՀՀ-ի կարևորությունը՝ որպես իրական գործընկեր և հարավ կովկասյան տարածաշրջանում ռուսական ազդեցության պահպանման առանցքային պլատֆորմ, դառնում է անխուսափելի: Քանի որ, եթե արցախյան հարցը լուծվի հօգուտ Ադրբեջանի, ապա պանթյուրքիզմի գաղափարախոսությունը, ունենալով նաև միանման քաղաքակրթական հիմքեր, կստանա ակտիվանալու իրական հնարավորություն՝ ինչն ուղղակիորեն կհակասի ոչ միայն հայկական, այլև ռուսական շահերին: Այս տեսանկյունից հայ-

[19] Տե՛ս **Շիրինյան Լ., Շիրինյան Տ.** Ճանապարհ դեպի Թուրան: Պատմահիրավական և ռազմագիտական տեսանկյուններ, Զանգակ-97, Երևան, 2004, 23 էջ:

[20] **Շիրինյան Լ.** Նոր աշխարհակարգը և Հայաստանը (Երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ), Սարվարդ հրատ., Երևան, 2010, էջ 190:

ռուսական շահերը մեկտեղվում են ընդհանուր անվտանգության դաշտում: Հետևապես՝ այսպիսի հավանական սցենարից խուսափելու համար Ռուսաստանը և ՀՀ-ն պետք է ավելի սերտ համագործակցեն արցախյան հարցում և թույլ չտան, որպեսզի այդ հարցը լուծվի հօգուտ պանթյուրքական նկրտումների: «Հայկական սեպն» այն առանցքային գործոնն է, որը լրջորեն խոչընդոտում է պանթյուրքիզմի գաղափարախոսության վերակենդանացմանը:

Երկրաքաղաքական այս իրողությունները Հարավային Կովկասում և նրա շուրջ բացարձակ արժեք են հաղորդում Հայաստանի անկախության փաստին որպես տարածաշրջանային քաղաքականության կարևորագույն ազդակի:[21]

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա այն պետք է աչալուրջ լինի նաև քաղաքակրթական գործոնին, քանի որ քաղաքակրթական տարբերությունները կարող են հակասություններ մտցնել Եվրասիական Տնտեսական Միության անդամ պետությունների տնտեսական շահերի մեջ:

Արդյունքում՝ եթե ձևավորվի պանթյուրքական դաշինքը, որի նախադրյալներն այսօր տեսանելի են, կարող է սկսվել Ռուսաստանի միջազգային մեկուսացում և ներքին ջլատում, ինչը կհանգեցնի աշխարհի նոր վերաբաժանման և ռեսուրսների վերաբաշխման: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ պանթյուրքական հավանական դաշինքը՝ ի դեմս թյուրքական պետությունների, ունի այդպիսի հավանական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բոլոր նախնական միջոցները: Այսինքն՝ հավանական պանթյուրքական դաշինքում Թուրքիան կարող է ծառայել որպես հարմար աշխարհագրական դիրք և հզոր ռազմական ներուժ՝ նաև անհրաժեշտության դեպքում ունենալով ՆԱՏՕ-ի օժանդակությունը: Ղազախստանը, Ադրբեջանը և Թուրքմենստանը կարող են սնուցել պանթյուրքական դաշինքին էներգետիկ ռեսուրսներով և էներգետիկ անվտանգությամբ, իսկ Ղազախստանը նաև կոմունիկացիաների տեսանկյունից՝ ապահովել ճանապարհ դեպի արևելք՝ մինչև Չինաստան՝ շրջանցելով Ռուսաստանը: Դա նշանակում է, որ հավանական պանթյուրքական դաշինքը կարող է նաև կամուրջի դեր կատարել արևելք-հարավ-արևմուտք և հակառակը՝ եռակողմ միասնական գործողություններ իրականացնելու համար՝ ի վնաս ռուսական շահերի:

Սակայն, այնուամենայնիվ, այս դեպքում Ռուսաստանը բազմաթիվ այլ գործոնների հետ մեկտեղ ունի ազդեցության ևս մեկ լծակ: Խոսքը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի մասին է, որն անցնում է «Եվլախով, տրանսպորտային հաղորդակցության կենտրոնով, որը գտնվում է Ղարաբաղյան ռազմաճակատի գծից 40 կմ հեռավորության վրա: Դա տալիս է ոչ միայն Հայաստանին, այլև Ռուսաստանին հնարավորություն օգտագործել ղարաբաղյան իրադարձությունները ճնշում

[21] **Շիրինյան Լ.** նույն տեղում, էջ 188:

գործադրելու ինչպես Բաքվի, այնպես էլ Անկարայի վրա [22] »: Հետևապես՝ պանթյուրքական հավանական դաշինքի և ծրագրի խափանման կարևոր գործոնը «հայկական սեպն» է, որտեղ ՀՀ-ն Արցախի հետ միասին կարող է լինել Ռուսաստանի համար վստահելի գործընկեր համատեղ ռազմավարության և անվտանգության տեսանկյունից: Հետևապես՝ Հայաստանի Հանրապետությունը միակ պետությունն է, որն իր աշխարհագրական դիրքով և Ռուսաստանի Դաշնության նկատմամբ բարեկամական և գործընկերային դիրքորոշմամբ խոչընդոտում է, որպեսզի պանթյուրքական գաղափարախոսության կրող պետությունները հնարավորության դեպքում միավորվեն միասնական սահմանային տարածքում և իրականացնեն «մեծ թուրանի» վաղեմի ծրագիրը:

ЕВРАЗИЙСКИЙ ЭКОНОМИЧЕСКИЙ СОЮЗ И РИСК АКТИВИЗАЦИИ ПАНТЮРКИЗМА

Эмиль Ордуханян
кандидат политических наук
Старший преподователь
Кафедры по правам человека, демократии и европаведению при ЮНЕСКО

Ключевые слова: Евразийский Экономический Союз, пантюркизм, геополитические процессы, «армянский клин», арцахский вопрос, Южный Кавказ.

Резюме

В статье рассматриваются процесс формирования и становления Евразийского Экономического Союза и предпосылки активизации пантюркской идеологии. Для обоснования данной концепции делается акцент на казахский и киргизский фактор как государства, имеющие в корнях тюркские основы, которые проявляются при первой же возможности. Данный вопрос изучается в статье и с точки зрения цивилизационного подхода, который играет важнейшую роль в современных геополитических процессах. На основе анализа вышеупомянутых вопросов делается вывод о том, что Армения и Россия, которые имеют культурные и цивилизационные подобия должны серьезно учитывать возможность активизации пантюркского фактора "послом" которого являются Казахстан и Киргизия при ЕврАзЭС. Основным препятствием для активизации и развития возможного пантюркского альянса является «армянский клин», который играет важную стратегическую роль в вероятном развитии такого сценария. Для предотвращения подобных развитии Россия и Армения должны сохранить и углублять достигнутые дружеские и партнерские взаимоотношения при учете того, что Армения является единственным стратегическим

[22] **Федоров Ю.** Каспийский узел, Мировая экономика и международные отношения, 1996, N 4, с. 87.

партнером России на Южном Кавказе, а пантюркская идеология была всегда направлена против Армении и России.

THE EURASIAN ECONOMIC UNION AND THE THREAT OF PAN-TURKISM ACTIVATION

Emil Ordukhanyan
PhD in Political Science
Senior lecturer at UNESCO Chair on
Human Rights, Democracy and European Studies

Keywords: Eurasian Economic Union, pan-turkism, geopolitical processes, «armenian wedge», South Caucasus.

Summary

This article discusses the process of formation and establishment of the Eurasian Economic Union and the preconditions of pan-Turkism ideology activation. To substantiate this concept we focuse on the Kazakh and Kyrgyz factor as a states which have Turkic bases, which appear at the first opportunity. In the paper this question is also studied in terms of civilizational approach, which plays a crucial role in modern geopolitical processes. Based on analysis of the above mentioned issues we conclude that Armenia and Russia, which have cultural and civilizational similarities should seriously consider the possibility of increasing of pan-Turkic factor the "ambassador" of which are Kazakhstan and Kyrgyzstan in Eurasian Economic Union. The main obstacle to the possible revitalization and development of pan-Turkic alliance is "Armenian wedge", which plays an important strategic role in the probable development of a such scenario. To prevent this, Russia and Armenia should maintain and deepen friendships and partnerships, considering the fact that Armenia is the only strategic partner of Russia in the South Caucasus, and pan-Turkic ideology was always directed against Armenia and Russia.